ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2025 թվականի N 1340 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 174-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 174-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածի 1.2-րդ գլխի 2-րդ կետի «Միջոցառման անվանումը» սյունակի 2-րդ պարբերությունում «Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունը արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ քսուքի հետազոտություններում» բառերը փոխարինել «Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունն արգանդի պարանոցի քաղցկեղի հետազոտություններում՝ մարդու պապիլոմավիրուս թեստավորմամբ (այսուհետ՝ ՄՊՎ)» բառերով, իսկ

նույն կետի «Ակնկալվող արդյունքը» այնուակում «կանանց արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում ընդգրկվածության ընդլայնում» բառերը փոխարինել «կանանց արգանդի պարանոցի քաղցկեղի հետազոտություններում ընդգրկվածության ընդլայնում՝ ՄՊՎ թեստավորմամբ:» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ